

**«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
19 մայիսի 2015 թվականի

**Ուսումնարտադրական, գիտամանկավարժական և գիտահետազոտական
փորձառությունների կազմակերպման վիճակի և դեկանատների ու ամբիոնների
խնդիրների մասին**

Լսելով և քննարկելով «Ուսումնարտադրական, գիտամանկավարժական և գիտահետազոտական փորձառությունների կազմակերպման վիճակը և դեկանատների ու ամբիոնների խնդիրները» հարցը (զեկուցող՝ ուսումնամեթոդական աշխատանքների գծով պրոռեկտոր, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Պ.Ա.Քալանթարյան), գիտական խորհուրդն արձանագրում է. ռեկտորատը, կարիերայի և մարքեթինգի կենտրոնը, դեկանատները և թողարկող ամբիոնները 2014-2015 ուսումնական տարում որոշակի աշխատանքներ են կատարել ուսանողության ուսումնարտադրական, գիտամանկավարժական և գիտահետազոտական փորձառությունները պատշաճ մակարդակով կազմակերպելու և անցկացնելու ուղղությամբ: Շարունակվել է կազմակերպությունների հետ համագործակցության ընդլայնման գործընթացը, ինչի արդյունքում կնքվել են 10 նոր պայմանագրեր և ՀՊՏՀ-ի հետ համագործակցող պետական մարմինների և մասնավոր կազմակերպությունների թիվը հասել է 85-ի: Թե՛ կարիերայի և մարքեթինգի կենտրոնը, թե՛ թողարկող ամբիոնները որոշ ջանքեր են գործադրել ուսանողների փորձառության վայրերի ընտրության և տեղավորման ուղղությամբ: Փորձառության անցկացման վայրերի մոտ 49%-ը պետական կառավարման մարմիններ են, իսկ 29%-ը՝ բանկերը:

2014-2015 ուսումնական տարվա ընթացքում ուսումնարտադրական, գիտահետազոտական և գիտամանկավարժական փորձառություններ են կազմակերպվել 1512 ուսանողի համար (նախորդ տարվա 2135-ի փոխարեն), որոնցից 1029-ը (շուրջ 68%)՝ խոշոր կազմակերպություններում՝ համալսարանի և կազմակերպությունների միջև կնքված պայմանագրերի հիման վրա: Այս ցուցանիշի բարելավման նպատակով նոր պայմանագրեր կնքելու գործում թողարկող ամբիոնները պետք է գործունե աջակցություն ցուցաբերեն ռեկտորատին ու կարիերայի և մարքեթինգի կենտրոնին:

Ուսանողների փորձառություններն ուսումնական գործընթացի կարևոր բաղկացուցիչ մասն են և ուսումնառության վերջնարդյունքների ձեռքբերմանը միտված կրթական բարեփոխումները թելադրում են, որ համապատասխան փոփոխություններ իրականացվեն ինչպես բուհ-կազմակերպություն համագործակցության ձևաչափերում, այնպես էլ փորձառության ծրագրերում և կազմակերպման ձևերում:

Անցած ուսումնական տարիներին փորձառության արդյունավետ կազմակերպման խոչընդոտները բաժանվել էին երեք խմբի, որոնք արդիական են նաև այժմ: Դրանք են՝

1. կազմակերպական,
2. բովանդակային,

2. Հանձնարարել թողարկող ամբիոնների վարիչներին՝

- 1) արդիականացնել փորձառությունների ծրագրերը, դրանք համապատասխանեցնել կրթական բարեփոխումների նոր պահանջներին և մինչև յուրաքանչյուր տարվա հունվարի 10-ը ուսումնամեթոդական աշխատանքների և աշխատաշուկայի հետ համագործակցության բաժին ներկայացնել փորձառությունների նորացված ծրագրերը,
- 2) խստացնել հսկողությունը փորձառություն անցնող ուսանողների հաճախումների նկատմամբ,
- 3) պահանջել ղեկավարներից, որ փորձառության ընթացքում երկու շաբաթը մեկ անգամ լինեն տեղերում՝ ինչպես ծրագրով տրված հանձնարարականների կատարման ընթացքը հսկելու, այնպես էլ կազմակերպություններից նշանակված ղեկավարների հետ փորձառության արդյունավետության բարձրացման գործնական հարցերը քննարկելու համար,
- 4) բացառել փորձառությանը չհաճախող ուսանողների հաշվետվություն ներկայացնելու և պաշտպանելու հնարավորությունը:

3. Հանձնարարել ուսումնամեթոդական աշխատանքների և աշխատաշուկայի հետ համագործակցության բաժնին՝

- 1) խիստ վերահսկողություն սահմանել բոլոր մասնագիտություններով փորձառությունների ծրագրերն արմատապես փոխելու, դրանցում գործնական առաջադրանքների բաղադրիչներն ուժեղացնելու և կազմակերպությունների գործունեության բնույթին ու առանձնահատկություններին համապատասխանեցնելու նկատմամբ:

4. Սույն որոշումը քննարկել ղեկանատների և թողարկող ամբիոնների նիստերում ու համապատասխան աշխատանքներ կատարել նշված հանձնարարականների կատարման համար:

5. Սույն որոշման կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել պրոռեկտորներ Պ.Ա.Քալանթարյանին և Մ.Ն.Հարությունյանին:

Գիտական խորհրդի նախագահ

Կ. Լ. Աթոյան

19.05.2015 թ.